խանաց և զգովութիւնս յըռամկաց, զծաղկա-
հոտ գինիսն, և զարուեստաւոր մատռուակ-
սըն, զքաղցրաձայն տաւիղս՝ և զուշատար ջըր-
նարս, և զգողտրիկ կերակուրս, և որ ինչ
մասունք հետևին սոցա. ա զոր յիմարեալքն
յաստիս ըղձանան ստանալ՝ և երանի տան
ունաւղացն: [Թղ. 12 բ]

Սա՝ ի վայրկեան ժամանակի մերկանայր՝
զամենայն խոտան և գարշելի վարկանելով, և
խարազնազգեստ՝ և հետիոտս փախուցեալ՝
անպարկ և անպաշար՝ իբրև զեղջերուս և
զթըռչունս զիմքր ի բարձունս. և խոտաճա-
րակ եղեալ՝ ոչ ցաւէր զվաղիւն, լսելով ընտիր
անաւթոյն՝ թէ սիրողն աշխարհի թշնամի է
Աստուծոյ: Եւ ի լքանելն՝ որպէս առնէր. ոչ
պաճարարաւտ թողոյր զանդաստանսն, և ոչ
սոկրատաւրէն ցրուէր զստացուածն, այլ ըստ
գերագունին հրամանի՝ թէպէտ և ի մանկու-
թենէ պահող էր աւրինացն երկուց՝ սակայն
զկատարումն հայցէր: Ուսանէր և զպատճա-
ռըս կենացն վասն որո վաճառէր և տայր. առ-
նույր և հետևէր աներկբա և անդառնալի:

Եւ արդ՝ զի՞նչ հաստուցումն այսմ. զի
եթէ Նեփայեանքն ընդ պատառատուն վարմին
ընկալան արքայական աթոռ, քննել զորդիսն

ա. Ձեռ. սոցայ: